ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 263 – Ա **01 հուլիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <ժբ> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 և 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշումների պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2020 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները՝ համաձայն հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ նախահաշիվները:

2. Հանձնարարել՝

1) հավելվածում ընդգրկված մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ շահութաբաժինների գումարները սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 2020 թվականի հոկտեմբերի 1-ը փոխանցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին.

2) մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը՝ (պետ՝ Յու. Մուշեղյան) մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2020 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշիվների վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

01.07.2020

X

ԳՆԵՍԱՄԱՆ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020թ. հոկտեմբերի 1 -ի
N 263-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների 2019թ. գործունեության արդյունքներով ՀՀ 2020թ. պետական բյուջե տարեկան շահութաբաժին վճարելու առաջարկությունների մասին
(համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

Հ/Հ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպության անվանումը	ՀՀ 2020թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	5,435,500.00
2	«Գավառի պոլիկլինիկա» ՓԲԸ	4,928,500.00
3	«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ	2,065,000.00
4	«Մարտունու ծննդատուն» ՓԲԸ	6,755,000.00
5	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	4,528,000.00
6	«Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ	4,520,800.00
7	«Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ	2,920,000.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	31,152,800.00

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ